Համափարփակ հաշվետվություն
«Գործընկեր երկրների միջև բարձրագույն կրթության ոլորտի շարժունակության ծրագիր» KA107-2019 նախագծի իրականացման մասին

- Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան
- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
- Շանդոնի Ջիանժու համալսարան
- Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան
- Ուկրաինայի բնապահպանության և կենսաբանական գիտությունների ազգային համալսարան
- Սումիի պետական համալսարան
- Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան՝ «Իգոր Սիկորսկի Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ»

Վարշավա 2022

Բովանդակություն

I. Նախագիծ ..... Error! Bookmark not defined.

1. Նախագծի նպատակները ..... **Error! Bookmark not defined.**
2. Մասնակից համալսարանները .....
3. Նախագծի տևողությունն ու ֆինանսավորումը.....
4. Իրականացված շարժունությունը.....

II. PROJECT PARTICIPANTS .....

1. Գործընկեր համալսարաններում ուսանողների շարժունությունը՝ որպես ուսման գործընթացի մի մաս ..... **Error! Bookmark not defined.**
2. Գործընկեր համալսարաններում Ակադեմիական անձնակազմի շարժունություն՝ ուսանողների համար դիդակտիկ դասեր անցկացնելու նպատակով
3. Անձնակազմի շարժուություն՝ վերապատրաստման նպատակով .....

I. ՆԱԽԱԳԻԾ

1. Նախագծի նպատակները

Նախագծի հիմնական նպատակն է՝ ուսանողների, գիտական և վարչական անձնակազմի ներկայացուցիչների շարժունության կազմակերպման միջոցով՝ դրական փորձի փոխանակումը, բուհերի միջև ուսանողության միջազգային շարժունության խթանումը:

Ծրագրի շրջանակում համալսարանների միջև իրականացված համագործակցությունն ուղղված էր մասնակիցների գիտելիքների, հմտությունների զարգացմանն ու ընդլայնմանը, մասնավորապես.

- մասնագիտական կարողությունների բարելավմանը,
- ինքնագնահատման բարձրացմանը,
- օտար լեզուների իմացության բարելավմանը,
- սոցիալական շփումների ընդլայնմանը միջազգային ասպարեզում՝ համագործակցության իրականացման միջոցով,
- աշխատավայրում և աշխատաշուկայում գրավչության բարձրացմանը,
- ուսումնական հմտությունների կատարելագործմանը,
- ուսումնական նյութերի և ձեռնարկների արդիականացմանը:

Նախագծի շրջանակում իրականացվել է նաև.

- մասնակից համալսարանների միջազգային ռազմավարության մշակում,
- կրթության որակի բարձրացում,
- կրթական ծրագրերի համեմատում և վերանայում, գործընկեր համալսարանների պարագայում՝ կրթական ծրագրերի եվրոպական չափանիշներին համապատասխանեցում,
- մագիստրոսական կրթական ծրագրերի համատեղ մշակում,
- գործընկեր համալսարանների հետ կրկնակի դիպլոմների ծրագրերի մշակում,
- հետազոտության ոլորտում համագործակցության զարգացմանն ուղղված առաջարկների համատեղ մշակում, դրանց ներկայացումը միջազգային, համատեղ հրատարակվող գիտական հրապարակումներում:

Փորձի փոխանակումը նպաստեց արտերկրում կրթություն ստանալու հայեցակարգերի մշակմանն ու տարածմանը, միջազգային ակադեմիական փոխանակման ֆինանսավորման նոր աղբյուրների ձևավորմանը, բուհերի դրական փորձի ներկայացմանը:

Քննարկվել են սոցիալական, իրավական, բնապահպանական խնդիրներ և դրանց լուծման ուղիները:

Բուհերի միջև ձևավորված համագործակցությունը նպաստեց դրանց հեղինակության բարձրացմանը՝ թե տեղական, թե տարածաշրջանային մակարդակներում:

Նախագծի շրջանակում առաջադրված բոլոր խնդիրները հաջողությամբ իրականացվեցին:

2. Մասնակից համալսարաններ

a. Լեհաստան

- **ՎԱՐՇԱՎԱՅԻ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
  Wyższa Szkoła Ekologii i Zarządzania w Warszawie
  (University of Ecology and Management in Warsaw)

Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանը՝ Լեհաստանի լավագույն մասնավոր տեխնիկական համալսարաններից է, որը հիմնադրվել է 1995 թվականի հուլիսի 18-ին՝ Կրթության ազգային նախարարության N 62 Որոշմամբ:

Համալսարանն ավելի քան 25 տարի իրականացնում է բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով ուսումնառություն առկա և հեռակա եղանակով:

Համալսարանում գործում է երկու ֆակուլտետ՝ ճարտարապետության ֆակուլտետ, ճարտարագիտության և կառավարման ֆակուլտետ, որտեղ ուսումնառությունը կազմակերպվում է ավելի քան 11 ուղղություններով:

Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի նպատակներից է՝ բարձրակարգ, ժամանակակից և արդիական ուսուցման համակարգի ներդնում, նպատակ ունենալով.

- գիտելիքի վրա հիմնված տեղեկատվական հասարակության ձևավորում, տնտեսության զարգացմանն ուղղված կարիքների բավարարում,
- Լեհաստանի և ԵՄ-ի ազգաբնակչության մասնագիտական կարողությունների և կրթական շեմի բարձրացում,
- կայուն զարգացման գաղափարի համատեքստում նոր տնտեսական, սոցիալական և մշակութային արժեքների ձևավորում, որոնք կհամապատասխանեն ներկա և ապագա աշխատաշուկայի պահանջներին:

Համալսարանի ղեկավարության ուշադրության կենտրոնում է՝ կրթության բարձր մակարդակի ապահովումը տարբեր ոլորտների ավելի քան 300 լավագույն մասնագետների ներգրավման միջոցով:

Բուհի դասախոսական անձնակազմում ներգրավված են Վարշավայի տարբեր համալսարանների գիտ.աշխատակիցներ, գործարար ոլորտի առաջատար մասնագետներ:

Պրոֆեսորադասախոսական կազմի և ֆակուլտետների խորհուրդների ներկայացուցիչների կողմից հնչեցրած առաջարկների հիման վրա (քննարկվել են կրթական ծրագրերի եվրոպական չափանիշներին համապատասխանելիության խնդիրները), բուհում ձևավորվել է կրթական գործընթաց, ներդրվել են տեսական, գործնական դասընթացներ: Այս մոտեցումը ուսանողներին հնարավորություն է ընձեռում ինքնուրույն ընդունել կշռադատված որոշումներ:

Վարշացայի էկոլոգիայի և կառավարման համալսարան
Olszewska 12 str., 00-792 Warsaw, Poland
Tel: +48 22 825 80 32/33
E-mail: erasmus@wseiz.pl
www.wseiz.pl

- Հայաստան

- **ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
  (National University of Architecture and Construction of Armenia)

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (ՃՇՀԱՀ)՝ ճարտարապետության և շինարարության բարձրագույն դպրոց է, որը հիմնադրվել է Երևանում 1921 թվականին, և գործում է ավել քան 100 տարի:

Համալսարանում գործում է հինգ ֆակուլտետ՝ Ճարտարապետության, Դիզայնի, Շինարարության, Քաղաքային տնտեսություն և էկոլոգիայի, Կառավարման և տեխնոլոգիաի: ՃՇՀԱՀ միակ մասնագիտացված բուհն է Հայաստանում, որը պատրաստում է ճարտարապետների, շինարարների:

ՃՇՀԱՀ-ի միջազգայնացման ռազմավարությունն ուղղված է կրթության, գիտության ոլորտում միջազգային համագործակցության կայուն զարգացմանը: Ռազմավարության կարևոր ուղղվածություններից է՝ արտերկրի ճարտարապետական և շինարարական համալսարանների հետ համագործակցության խթանումը, համատեղ գիտաժողովների, ուսանողական նախագծային շաբաթների, մրցույթների կազմակերպումն ու անցկացումը, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության շարժունության իրականացումը:

ՃՇՀԱՀ ներգրավված էր TEMPUS, Erasmus Mundus ծրագրերում, ներկայումս ակտիվ համագործակցում է Erasmus +, Erasmus + InnoCENS և Iacobus + ծրագրերի համատեքստում: ՃՇՀԱՀ-ն իրականացրել է ԵՄ ֆինանսավորմամբ շարժունության ծրագրեր Միլանի Պոլիտեխնիկական համալսարանի, Ալկալայի համալսարանի և մի շարք այլ համալսարանների հետ: Համագործակցության համաձայնագրերի շրջանակում իրականացվել են ուսանողների փոխանակման ծրագրեր Լեհաստանի, Իսպանիայի, Իտալիայի և այլ եվրոպական գործընկեր բուհերի հետ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Address: 105 Teryan Street, Yerevan 0009, Republic of Armenia
+374 10 58-72-84
+374 10 54-74-25
E-mail: info@nuaca.am
www.nuaca.am

b. Չինաստան

- 山东建筑大学
- ՇԱՆԴՈՒՆԻ ՋԻԱՆԺՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
  (Shandong Jianzhu University)

Շանդունի Ջիանժու համալսարանը հիմնադրվել է Շանդուն նահանգի Բնակարանային, քաղաքային տնտեսության և գյուղատնտեսության զարգացման նախարարության կողմից 1956 թվականին: Համալսարանն այժմ ունի ավելի քան 27.000 ուսանող (ներառյալ օտարերկրացի): Բուհը գտնվում է Շանդուն նահանգում՝ մշակույթային և տնտեսական կարևոր տարածաշրջաններից մեկում:

Շանդունի Ջիանժու համալսարանը՝ հարուստ պատմությամբ, հզոր ակադեմիական ներուժով և միջազգային ճանաչում ունեցող բուհ է, որտեղ ստեղծված են բոլոր պայմանները թե օտարերկրացի, թե չինացի ուսանողների համար:

Համալսարանը զբաղեցնում է ավելի քան 160 հեկտար տարածք, շինությունների ընդհանուր մակերեսը՝ 660 000 ք.մ.: Այն ներառում է 20 դպրոց և 4 ինստիտուտ, ուսումնառությունը կազմակերպվում է բակալավրիատի 58 կրթական ծրագրով, գործում է 1 հետբուհական կրթական ծրագիր, 17 առաջին մակարդակի և 62 երկրորդ մակարդակի մագիստրոսական կրթական ծրագրեր, 9 մասնագիտական մագիստրոսական կրթական ծրագիր:

Համալսարանը իրավունք ունի միջազգային փոխանակման ծրագրերի համար հավաքագրել ուսանողներ: Բուհը համագործակցում է 30 երկրների ավելի քան 80 համալսարանների հետ, ներառյալ Ավստրալիայի, ԱՄՆ-ի, Նոր Զելանդիայի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի համալսարանները: Ներկայումս գործում է բակալավրիատի համատեղ 8 կրթական ծրագիր և ուսանողական փոխանակման ավելի քան 20 ծրագիր:

Շանդունի Ջիանժու համալսարան
Shandong Jianzhu University
Fengming Road , Lingang Development Zone, Jinan 250101,Shandong Province, P. R. China
+86-531-86367302
international@sdjzu.edu.cn
www.sdjzu.edu.cn

c. Կոսովո

- **ՖԵՐԻԶԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
- **Universiteti i Shkencavete Aplikuara ne Ferizaj**
  (University of Applied Sciences in Ferizaj)

Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարանը (UASF) հիմնադրվել է 2015 թվականի հուլիսի 6-ին՝ Կոսովոյի Հանրապետության խորհրդարանի որոշմամբ, և հանդիսանում է Պրիշտինայի համալսարանի կիրառական գիտությունների ֆակուլտետի իրավահաջորդը: 1976 թ. հիմնադրվեց Բարձրագույն կրթության կենտրոն, որը ուներ մեքենաշինական և փայտամշակման բաժիններ:

1988 թ. Բարձրագույն կրթության կենտրոնը լուծարվեց և ստեղծվեց Բարձրագույն տեխնիկական դպրոցը՝ մեքենաշինական և փայտամշակման ամբիոններով:

2002-2003 ուստարում ներդրվեցին բակալավրիատի կրթական նոր ծրագրեր Մեքենաշինության ամբիոնում՝ «Արհեստական նյութերի մշակման տեխնոլոգիա», Փայտաարդյունաբերության ամբիոնում՝ «Փայտամշակում» մասնագիտություններով:

Պրիշտինայի համալսարանի ղեկավար կազմի 05.09.2005 թ. որոշմամբ Բարձրագույն տեխնիկական դպրոցը վերակազմավորվեց Տեխնիկական կիրառական գիտությունների ֆակուլտետի, այնուհետև՝ Կիրառական գիտությունների ֆակուլտետի:

Համալսարանում գործում է 5 ֆակուլտետ:

- <u>Ճարտարապետության, դիզայնի և փայտամշակման տեխնոլոգիաների ֆակուլտետ.</u>

- Ճարտարագիտություն և կահույքագործություն,
- Փայտարտադրություն և դիզայն,
- Կանաչ ճարտարապետություն և ինտերիերի դիզայն (մագիստրոսական ծրագիր):

Նշված ծրագրերը ներառում են Ճարտարապետություն, Ինտերիերի դիզայն և փայտամշակում ուղղությունները:

- <u>Զբոսաշրջության և շրջակա միջավայրի ֆակուլտետ.</u>

- Զբոսաշրջություն և հյուրանոցային կառավարում,
- Զբոսաշրջություն և նորարարություն (մագիստրոսական ծրագիր):

Ուսանողներին ներկայացվում են միջազգային չափանիշներին համապատասխանող ծրագրեր զբուսաշրջության, կառավարման և հյուրանոցային գործի ոլորտներում:

- <u>Արդյունաբերական ճարտարագիտության և ինֆորմատիկայի ֆակուլտետ.</u>

- Արդյունաբերական ճարտարագիտություն, ինֆորմատիկա,
- Կիրառական ինֆորմատիկա (բակալավրիատ),

- Ճարտարագիտություն և ինֆորմատիկա (մագիստրատուրա):

Այս ծրագրերով նախատեսված է Ճարտարագիտություն, Ինֆորմատիկա, Արդյունաբերական ճարտարագիտություն մասնագիտությունների խորը ուսուցում:

- Կառավարման ֆակուլտետ.

- Կառավարում և արդյունաբերություն:

Նշյալ կրթական ծրագրերով իրականացվում է ուսումնառություն՝ գիտական և տեխնոլոգիական նորարար մոտեցումների կիրառմամբ:

- Կիրառական արվեստի ֆակուլտետ.

- Գրաֆիկական դիզայն և մուլտիմեդիա:

Կրթական ծրագիրը մշակվել է հաշվի առնելով աշխատաշուկային և համալսարանում գործող Արտադրողների խորհրդի պահանջները:

Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան
University of Applied Sciences in Ferizaj
Rr. RexhepBislimi, 70000 Ferizaj, Kosovo
Tel: +381(0) 290 310 010; +381(0) 290 310 013
E-mail: info@ushaf.net
www.ushaf.net

d. Ուկրաինա

- **ՍՈՒՄԻԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
  (Sumy State University)

Սումիի պետական համալսարանը (SumDU)՝ բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը գտնվում է Ուկրաինայի հյուսիս-արևելքի Սումի քաղաքում: Համալսարանն իրականացնում է գիտահետազոտական, կրթական և սոցիալական ուղղվածություն ծրագրեր՝ նախապատվություն տալով միջազգային համագործակցության խթանմանը, նորարարական տեխնոլոգիաների կիրառմանը, մասնավորապես՝ SS-ի ոլորտում: Բուհի բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնառում են 12 000 ուսանող, 2000 օտարերկրացի ավելի քան 53 երկրից: Գործում են 20 կրթական ծրագիր անգլերենով:

Սումիի պետական համալսարանը համարվում է ազգային առաջատար բուհերից մեկը, ընդգրկված է բուհերի միջազգային վարկանիշավորման հեղինակավոր ցանկերում՝ QS World University Rankings THE World University Rankings от Times Higher Education. Համալսարանը անդամակցում է Եվրոպական համալսարանական, Համալսարանական միջազգային ասոցիացիաներին:

Բուհը համագործակցում է 300 գործընկեր կազմակերպությունների հետ 58 երկրից:

Եվրոպական հանձնաժողովի ֆինանսավորմամբ իրականացվել է 300 դրամաշնորհային ծրագիր: Վերջին 5 տարվա ընթացքում դրամաշնորհային ծրագրերի շրջանակում իրականացված հետազոտական աշխատանքների ծավալն ավելացել է 20 անգամ:

Սումիի պետական համալսարան
2, Rymskogo-Korsakovast., 40007 Sumy, Ukraine
Tel/fax: +38 (0542) 33-10-81
E-mail: info@dir.sumdu.edu.ua
www.sumdu.edu.ua

- **ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ և ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
  (National University of Life and Environmental Sciences of Ukraine)

Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարանը՝ ոլորտի առաջատար հաստատություններից է: Ունի 26 000 ուսանող և 600 շրջանավարտ, որոնք ուսումնառել և ուսումնառում են Կիևի բազային 3 ինստիտուտների 13 ամբիոններում, և Ուկրաինայում գործող հավատարմագրված 10 առանձնացված ստորաբաժանումներում:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմում ընդգրկված են 2600 դասախոս, այդ թվում՝ մոտ 300 պրոֆեսոր և դոկտոր, ավելի քան 1000 ասիստենտ:

Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարանը տարեցտարի ամրապնդում է իր առաջատար դիրքերը միջազգային ասպարեզում՝ ակտիվորեն մասնակցելով միջազգային կրթական ծրագրերին, վերապատրաստելով գյուղատնտեսության ոլորտի օտարերկրյա մասնագետների:

Համալսարանում կրթական գործընթացը կանոնակարգվում է միջազգային պայմանագրերով, ազգային ծրագրերով, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքված պայմանագրերով: Ներկայումս համալսարանում ուսումնառում են մ Բելառուսի, Վրաստանի, Իրաքի, Իրանի, Ղազախստանի, Կիպրոսի, Լիբանանի, Մարոկկոյի, Պաղեստինի, Լեհաստանի, Ռուսաստանի, Սլովակիայի, ԱՄՆ-ի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Չեխիայի քաղաքացիներ:

Բուհի սերտ համագործակցությունը այլ առաջատար համալսարանների հետ նպաստեց կրթական համակարգի բարեփոխմանը և արդիականացմանը՝ միջազգայնորեն ընդունված պահանջներին համապատասխան:

Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարան
Tel: +38 044 531-36-52
E-mail: rectorat@nubip.edu.ua
www.nubip.edu.ua

- **Киевский политехническийинститут имениИгоря Сикорского**
- **ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ «ԻԳՈՐ ՍԻԿՈՐՍԿՈՒ ԱՆՎԱՆ ԿԻԵՎԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»**
  (National Technical University of Ukraine "Igor Sikorsky Kyiv Polytechnic Institute")

Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարանը (2016 թ.՝ Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկի անվան Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ») հիմնադրվել է 1898 թվականին և հանդիսանում է Եվրոպայի խոշոր տեխնիկական համալսարաններից մեկը: Բուհի կազմում գործում է 16 ֆակուլտետ, 11 գիտակրթական կենտրոն, մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ: Բուհը համագործակցում է մի շարք խոշոր տեխնիկական համալսարանների և հեղինակավոր միջազգային կազմակերպությունների հետ՝ UNESCO, UNIDO, WIPO, NATO, EDNES, ICSU, CODATA, այդ թվում նաև միջազգային կորպորացիաների հետ՝ SIEMENS, FESTO, SAMSUNG, INTEL:

Համալսարանի գիտական և տեխնիկական նորարարություններն ամեն տարի արժանանում են Ուկրաինայի տարբեր պետական և միջազգային մրցանակների:

2021 թ. սեպտեմբերին Բարձրագույն կրթության միջազգային վերլուծական QS Quacquarelli Symonds գործակալությունը հրապարակել է համալսարանի 2022 թ. շրջանավարտների աշխատանքի տեղավորման մասին տեղեկատվությունը, համաձայն որի վերջիններս զբաղեցնում են Employer Reputation և Alumni Outcomes վարկածով՝ 301 տեղը, Employer - Student Connections, Partnerships with Employers և Graduate Employment Rate՝ 201 տեղը: Այս փաստերը վկայում են համալսարանի Ուրկաինայում զբաղեցրած առաջատար դիրքի մասին:

Համալսարանն ունի միջազգային կապերի հսկայական բազա և ակտիվորեն մասնակցում է տարբեր միջազգային ծրագրերին: Այն, ուկրաինական բուհերի շարքում, զբաղեցնում է առաջատար դիրք՝ ԵՄ «Էրազմուս+» ծրագրում ակադեմիական շարժունության ամենամեծ մասնակիցների թվով: Համալսարանը այլ երկրների բուհերի և կազմակերպությունների հետ իրականացնում է ավելի քան շարժունության 70 դրամաշնորհային ծրագիր:

Միջազգայնացման կարևորագույն բաղադրիչներից է՝ միջազգային ասպարեզում բուհի դիրքերի ամրապնդումը:

Երկկողմ համաձայնագրերով կարգավորվող շարժունության ծրագրերի, մագիստրատրոսական և հետբուհական կրկնակի դիպլոմների կրթական ծրագրերի, ինչպես նաև ուսանողների և անձնակազմի ակադեմիական շարժունության այլ նախագծերի իրականացումը նպաստում է բուհի միջազգայինացմանը:

Համալսարանի առաքելությունն է՝ աջակցել ապագա հասարակության ձևավորմանը, կայուն զարգացման հայեցակարգի միջազգայնացմանը՝ կիրառելով նորագույն գիտական հետազոտությունները և նորարարական մոտեցումները:

Բուհում ստեղծվել են բոլոր պայմանները ուսանողի մտավոր, մասնագիտական և ստեղծագործական ներուժի զարգացման համար:

Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարանն ընդլայնում է միջազգային համագործակցությունը՝ մեծ դեր տալով բուհի միջազգայնացմանը, միջազգային աշխատաշուկայի համար բարձրակարգ կադրերի պատրաստմանը, գետահետազոտական և կրթական ծրագրերի արդիականացմանը:

Համալսարանի միջազգային գործունեությունը նախատեսում է.

1) միջազգայնացման նպատակով համալսարնի ամբողջ ներուժի օգտագործում,

2) միջազգային հարթակներում ակտիվ տեղեկատվական քաղաքականության իրականացում,

3) համալսարանի միջազգային գործունեության և համատեղ կրթական նախագծերի իրականացման պայմանների բարելավվում,

4) արտաքին տնտեսական գործունեության համակարգում:

Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկու անվան Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ»
37 Prosp. Peremohy, Kyiv, Ukraine, 03056
Tel.: +380 44 236 7989
E-mail: mail@kpi.ua
www.kpi.ua

3. Նախագծի տևողությունը, բյուջեն

Նախագծի տևողությունը	**01.08.2019– 31.07.2022**
Ամիս	**36**
Ընդհանուր բյուջեն	**41 895 եվրո**

Ծրագրի բյուջեն բաշխվել է գործընկեր համալսարանների միջև՝ համաձայն ծրագրի ֆինանսական հատվածի:

Համալսարան	Երկիր	Քաղաք	Տրամադրվող ֆին. միջոցներ (€)	Փաստացի Ծախսերը (€)
Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան	Լեհաստան	Վարշավա	6 310	3 155
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	Հայաստան	Երևան	5 700	7 040
Ադրբեջանի տեխնիկական համալսարան	Ադրբեջան	Գյանջա	5 700	5 700
Շանդոնի Ջիանժու համալսարան	Չինաստան	Ժինան	6 620	0*
Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան	Կոսովո	Ֆերիզայ	5 530	5 530
Սումիի պետական համալսարան	Ուկրաինա	Սումի	1 255	2 510
Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարան	Ուկրաինա	Կիև	4 275	4 275
Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկու անվան Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ»	Ուկրաինա	Կիև	1 255	1 255
			36 645	29 465
		Կազմակերպական աջակցություն	5 250	4 550
		Ընդհանուր բյուջեն	**41 895**	**34 015**
*ֆին. միջոցները չեն տրամադրվել COVID-19 համաճարակի տարածման պատճառով				

Շարժունության ձևաչափը	Էրազմուս+ ծրագրի ազգային գործակալության կողմից տրամադրված բյուջեն	Իրականացված ծախսեր
SMS – ուսանողների շարժունություն՝ ուսման նպատակով	22 090	17 270
STA – անձնակազմի շարժունություն՝ դասավանդման նպատակով	14 555	5 190
STT – անձնակազմի շարժունություն՝ վերապատրաստման նպատակով	0	7 005
OS – կազմակերպական աջակցություն	5 250	4 550
Ընդհանուրը	**41 895**	**34 015**

4. Իրականացրած շարժունության ծրագրեր

Ծրագրի շրջանակում իրականացվել է ուսանողների, դասախոսական անձնակազմի և վարչական անձնակազմի շարժունություն:

ԲՈՒՀ	Երկիր	Քաղաք	ՈՒՇՈՒ	ԱԾԴ	ԱԾՎ	Ընդհանուր
Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան	Լեհաստան	Վարշավա	0	0	2	**2**
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	Հայաստան	Երևան	1	1	1	**3**
Ադրբեջանի տեխնիկական համալսարան	Ադրբեջան	Գյանջա	1	1	0	**2**
Շանդունի Ջիանժու համալսարան	Չինաստան	Ժինան	0	0	0	**0***
Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան	Կոսովո	Ֆերիզայ	1	0	1	**2**
Սումիի պետական համալսարան	Ուկրաինա	Սումի	0	1	1	**2**
Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարան	Ուկրաինա	Կիև	1	0	0	**1**
Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկու անվան Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ»	Ուկրաինա	Կիև	0	1	0	**1**
		Ընդհանուրը	**4**	**4**	**5**	**13**

*** Շարժունությունը չի իրականացվել COVID-19 համավարակի պատճառով**

Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանը ծրագրի շրջանակում 01.08.2019-31.07.2022 թթ. ժամանակահատվածում հյուրընկալել է ընդհանուր առմամբ 11 հոգի՝ ուսանող, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամներ:

- **4 ուսանող.** 1 ուսանող ՃՇՀԱՀ-ից, 1 ուսանող Ադրբեջանի տեխնիկական համալսարանից, 1 ուսանող Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարանից, 1 ուսանող Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարանից;
- **4 դասախոս.** 1 դասախոս Ադրբեջանի տեխնիկական համալսարանից, 1 դասախոս

ՃՇՀԱՀ-ից, 1 դասախոս Սումիի պետական համալսարանից, 1 դասախոս Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարանից «Իգոր Սիկորսկու անվան Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ»;

- **3 վարչական անձնակազմի ներկայացուցիչ**. 1 հոգի ՃՇՀԱՀ-ից, 1 հոգի Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարանից, 1 հոգի՝ Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարանից:

Անհրաժեշտ է նշել, որ Վարշավային էկոլոգիայի և կառավարման համալսարանում 2022 թ. հուլիսի 4-8-ը կազմակերպվեց Աշխատանքային շաբաթ՝ գործընկեր համալսարանների վարչական անձնակազմերի ներկայացուցիչների համար, որը ընթացքում քննարկվեցին. -

- սոցիալ-տնտեսական համագործակցության ձևաչափերը,

- միջազգային մարքեթինգի հարցերը,

- Լեհաստանի և գործընկեր երկրների կրթական համակարգերը,

- կրթության որակի ապահովման համակարգերը,

- համաճարակի պայմաններում կազմակերպական, վարչական և ուսուցման նոր մարտահրավերները,

- հեռավար ուսուցման համակարգի զարգացման հեռանկարները,

- գործընկեր համալսարանների միջև կրթական և հետազոտական համագործակցության զարգացման հնարավորությունները,

- հետագա համագործակցության ծրագրերը,

Էրազմուս+ ծրագիրն և լեհերենի հիմունքների ուսուցմանը:

Աշխատանքային շաբաթվա ընթացքում մասնակիցները ներկայացրեցին իրենց դրական փորձը և քննարկեցին ծրագրերի իրականացման ընթացքում առաջացած հիմնական խնդիրները:

Հանդիպումը խթան հանդիսացավ.

- Գործընկեր համալսարանների միջազգայնացման ռազմավարության մշակման և իրականացման համար,
- կրթության որակի բարելավման մեխանիզմների և որակի ապահովման գործիքակազմի հետ կապված փորձի փոխանակման համար,
- կրթության և ծառայությունների որակի բարելավման համար,
- բուհերի միջև ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմերի միջազգային փոխանակման ընթացակարգերի և մեխանիզմների կատարելագործման համար,
- հետազոտական գործունեության շրջանակում համագործակցության ձևերի մշակմանն ու փոխանակման համար,
- Եվրոպական համալսարանների հետագա ինտեգրման համար,

- համագործակցության ոլորտում սոցիալական, իրավական և բնապահպանական խոչընդոտների վերացման հետ կապված դրական փորձի փոխանակման համար,
- միջմշակութային հաղորդակցության խթանմանն ու եվրոպական արժեքների ընկալման համար:

II. ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

No	Մասնակցի անուն, ազգանուն	Գործունեության տեսակը	Մեկնարկը	Ավարտը	Տևողությունը (օր)	Ֆինանսավորումը (եվրո)	Ուղարկող համալսարանը	Ընդունող համալսարանը
1	Զաուր Ալիև	STA	25.10.2021	29.10.2021	5	1 340	ATU (Ադրբեջան)	UEM (Լեհաստան)
2	Զուլիա Օպանասյուկ	STA	23.05.2022	27.05.2022	5	1 255	SumDU (Ուկրաինա)	UEM (Լեհաստան)
3	Սոֆյա Բոնչակ	SMS	27.09.2021	26.02.2022	150	4 275	NULES (Ուկրաինա)	UEM (Լեհաստան)
4	Մարինա Պիչուգինա	STA	09.03.2020	13.03.2020	5	1 255	KPI (Ուկրաինա)	UEM (Լեհաստան)
5	Նոնա Շիրոյան	STA	22.11.2021	26.11.2021	5	1 340	NUACA (Հայաստան)	UEM (Լեհաստան)
6	Լիրիդոնա Բիթիգի	SMS	22.02.2021	21.07.2021	150	4 275	UASF (Կոսովո)	UEM (Լեհաստան)
7	Քրիստինա Շեչկովա	STT	04.07.2022	08.07.2022	5	1 255	SumDU (Ուկրաինա)	UEM (Լեհաստան)
8	Կիմա Եդոյան	SMS	28.09.2020	27.02.2021	150	4 360	NUACA (Հայաստան)	UEM (Լեհաստան)
9	Իրինա Անդրեևա	STT	19.04.2021	23.04.2021	5	1535	UEM (Լեհաստան)	UASF (Կոսովո)
10	Եվգենիա Մաշուկովա	STT	29.11.2021	03.12.2021	5	1 620	UEM (Լեհաստան)	ATU (Ադրբեջան)
11	Էլկան Սեյֆուլլաև	SMS	27.09.2021	26.02.2022	150	4 360	ATU (Ադրբեջան)	UEM (Լեհաստան)
12	Տարոն Ալեքսանյան	STT	04.07.2022	08.07.2022	5	1 340	NUACA (Հայաստան)	UEM (Լեհաստան)
13	Ագրոն Բաջրակտարի	STT	04.07.2022	08.07.2022	5	1 255	UASF (Կոսովո)	UEM Լեհաստան)

SMS	ուսանողների շարժունություն՝ ուսման նպատակով	NULES	Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարան, Ուկրաինա

STA	անձնակազմի շարժունություն՝ դասավանդման նպատակով	KPI	Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկու անվան Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ», Ուկրաինա
STT	անձնակազմի շարժունություն՝ վերապատրաստման նպատակով	UEM	Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան
NUACA	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	ATU	Ադրբեջանի տեխնիկական համալսարան
UASF	Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան, Կոսովո	SumDU	Սումիի պետական համալսարան, Սումի

1. Ուսանողների շարժունության իրականացում գործընկեր համալսարաններում՝ ուսումնառության նպատակով

a. **Անուն, ազգանունը՝** Սոֆյա Բոնչակ

b. **Ուղարկող համալսարանը՝** Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարան, Ուկրաինա

c. **Ընդունող համալսարանը՝** Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան

d. **Տևողությունը՝** 27.09.2021 – 26.02.2022

e. **Ֆինանսավորումը՝** 4 275 €

a. **Անուն, ազգանունը՝** Լիրիդոնա Բիթիգի

b. **Ուղարկող համալսարանը՝** Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան

c. **Ընդունող համալսարանը՝** Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան

d. **Տևողությունը՝** 22.02.2021 – 21.07.2021

e. **Ֆինանսավորումը՝** 4 275€

a. **Անուն, ազգանունը՝** Կիմա Եղոյան

b. **Ուղարկող համալսարանը՝** Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

f. **Ընդունող համալսարանը՝** Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան

c. **Տևողությունը՝** 28.09.2020 – 27.02.2021

d. **Ֆինանսավորումը՝** 4 360 €

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունություն՝ գործընկեր համալսարանների ուսանողների հետ դիդակտիկ դասընթացներ անցկացնելու նպատակով

a) **Անուն, ազգանունը՝** Ջուլիա Օպանասյուկ

b) **Ուղարկող համալսարանը՝** Սումիի պետական համալսարան, Սումի, Ուկրաինա

c) **Ընդունող համալսարանը՝** Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան

d) **Տևողությունը՝** 23.05.2022 – 27.05.2022

e) **Ֆինանսավորումը՝** 1 255 €

f) **Արդյունքների նկարագրությունը.**

«Էրազմուս+ ծրագրի շրջանակում 2022 թ. մայիսի 22-27-ը ինձ հնարավորություն ընձեռվեց ներկայացնելու իմ փորձը Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանի ուսանողներին:

Նախ, շատ երախտապարտ եմ այս համագործակցության համար Լեհաստանի իմ գործընկերներից: Բարձր են գնահատում Ձեր անմիջական աջակցությունը: Բացի այդ, ինձ շատ դուր եկավ համալսարանական մթնոլորտն ու ուսանողների ստեղծագործ մոտեցումը: Մենք շատ արդյունավետ շաբաթ ունեցանք, կիսվեցինք մեր հմտություններով և ձեռք բերված գիտելիքներիով: Ավելին, ես ուրախ էի մասնակցել լուսանկարչության դասին, ինչը հնարավորություն ընձեռեց փոխանցել իմ գիտելիքները ապագա դիզայներներին և ճարտարապետներին, տեսնել, թե ինչպես են նրանք աշխատում:

Բացի այդ, ես ծանոթացա Վարշավայի տեսարժան վայրերին: Շատ տպավորված եմ: Զարմանալի քաղաք է, այն ամբողջությամբ ավերվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, բայց այդ ավերվածությունների հետքերը չեն մնացել, քաղաքը ամբողջությամբ վերակառուցված է: Քաղաքի առուտենտիկ դիմագիծը պահպանվել է նախապատերազմյան շրջանի օրիգինալ գծագրերի և էսքիզների շնորհիվ, որոնց համար, ի դեպ, վճարել են լեհերը: Տպավորված եմ քաղաքով և այս անմոռանալի ճամփորդությամբ»:

a. **Անուն, ազգանունը՝** Մարինա Պիչուգինա

b. **Ուղարկող համալսարանը՝** Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկու անվան Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ», Ուկրաինա

c. **Ընդունող համալսարանը՝** Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան

d. **Տևողությունը՝** 09.03.2020 – 13.03.2020

e. **Ֆինանսավորումը՝** 1 255 €

a. **Անուն, ազգանունը՝** Նոնա Շիրոյան

b. **Ուղարկող համալսարանը՝** Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (Հայաստան)

c. **Ընդունող համալսարանը՝** Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան

d. **Տևողությունը՝** 22.11.2021 - 26.11.2021

e. **Ֆինանսավորումը՝** 1 340 €

f. **Արդյունքների նկարագրությունը.**

«2021 թվականի նոյեմբերի 22-26-ը մասնակցի Վարշավայի համալսարանում (Լեհաստան) կազմակերպված ERASMUS + KA107 Teaching Mobility ծրագրին:

Համալսարանի 1-ին, 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների համար հանդես եկա «Դիզայնի ժամանակակից տենդենցիաները» և «Էթիկայի խնդիրները դիզայնում» խորագրով դասախոսություններով՝ 8 ակադեմիական ժամ ընդհանուր տևողությամբ: Այս թեմաները են ներկայացնում եմ նաև ՃՇՀԱՀ-ի դիզայնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներին:

Դասախոսություններին ներկա էին Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի դասախոսներ Յան Դիել-Միխայլովսկին և պրոֆ. Պյոտր Լեոնարդ Յավորովսկին, բուհի 38 ուսանող, որոնք դրական կարծիք հնչեցրեցին, ինչն ինձ համար շատ կարևոր էր:

Այցիս ընթացքում հնարավորություն ունեցա ծանոթանալու համալսարանի դիզայնի ֆակուլտետի լեհ ուսանողների աշխատանքներին: Ֆակուլտետի ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում քննարկվեցին դասավանդման մեթոդաբանությունը և դասախոսությունների բովանդակությունը, ինչը մասնագիտական փորձի փոխանակման լավ օրինակ էր:

Այցելությանս ընթացքում հնարավորություն ունեցա հանդիպելու համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի որակի ապահովման և զարգացման գծով փոխդեկան՝ պրոֆ. Բոգդան Գորչիկայի և դիզայնի բաժնի դասախոսներ՝ Ռոխ Ֆորովիչին և Յան Դիել-Միխայլովսկուն: Հանդիպման ընթացքում քննարկեցինք 2 բուհերի միջև համագործակցության հետագա ընդլայնմանը վերաբերող հարցեր (համատեղ ամառային դպրոցի կազմակերպում, վեբինարների անցկացում և այլն):

Այցիս ընթացքում օտարերկրացի ուսանողներին ներկայացված դասախոսությունները շատ օգտակար էին: Դրանց արդյունքում կարողացա վերանայել դասավանդման մեթոդաբանությունը և բովանդակությունը:

Լեհաստանում գտնվելու ժամանակ ծանոթացա լեհ հայտնի դիզայներների հետ՝ Յան Դիելլ-Միչալովսկուն, Յան Բուչեկին:

Այս փոխանակման ծրագրի արդյունքում ՃՇՀԱՀ-ի իմ գործընկերներին ներկայացրեցի լեհական դիզայնի վերաբերյալ շնորհանդես, մշակվեց Erasmus + ծրագրի նոր առաջարկ, որում ներառված են երկու բուհերի դիզայնի ֆակուլտետների դասախոսների այցերի կազմակերպումը և սեմինարների անցկացումը»:

2. Անձնակազմի շարժունություն՝ վերապատրաստման նպատակով

a. **Անուն, ազգանունը՝** Քրիստինա Շեչկովա
b. **Ուղարկող համալսարանը՝** Սումիի պետական համալսարան, Սումի, Ուկրաինա
g. **Ընդունող համալսարանը՝** Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան
c. **Տևողությունը՝** 04.07.2022 – 08.07.2022
d. **Ֆինանսավորումը՝** 1 255 €
e. **Արդյունքների նկարագրությունը.**

Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանում անցկացրած Էրազմուս+ KA107 ծրագրին ներկա էր նաև Միջազգային հարաբերությունների բաժնի ակադեմիական շարժունության ծրագրերի համակարգող Քրիստինա Շեչկովան:

Միջոցառմանը մասնակցեցին Ուկրաինայի, Հայաստանի և Կոսովոյի ներկայացուցիչներ: Միջազգային շաբաթվա նպատակն էր՝ ներկայացնել ուսանողների և անձնակազմի ակադեմիական փոխանակման ընթացակարգերը և մեխանիզմները, մշակել հետագա համագործակցության ուղղությունները Ծրագրի ընթացքում մասնակիցները ներկայացրեցին իրենց համալսարանները, գործող կրթական համակարգերը, քննարկեցին որակի ապահովմանն ուղղված գործընթացները, Erasmus+ KA107 նախագծերի իրականացման հետ կապված խնդիրները, ծանոթացան լեհական փորձին:

Քրիստինա Շեչկովա՝ «Միջազգային շաբաթվա ծրագիրն ինտենսիվ էր և հետաքրքիր: Հիանալի հնարավորություն էր ներկայացնելու շարժունության ծրագրերի իրականացման փորձը, քննարկելու բուհերի հետագա համագործակցությանն զարգացմանն ուղղված խնդիրները, ծանոթանալու հետաքրքիր մարդկանց հետ: Ինձ շատ դուր եկավ Լեհաստանը, համալսարանի Միջազգային հարաբերությունների վարչության թիմը և անձնակազմի մյուս անդամները, որոնք շատ բարեհամբյուր էին և հյուրընկալ: Շնորհակալ եմ այս հնարավորության համար»:

a. **Անուն, ազգանունը՝** Իրինա Անդրևա

h. **Ուղարկող համալսարանը՝** Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան

b. **Ընդունող համալսարանը՝** Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան

Տևողությունը՝ 19.04.2021 – 23.04.2021

c. **Ֆինանսավորումը՝** 1 535 €

a. **Անուն, ազգանունը՝** Տարոն Ալեքսանյան
b. **Ուղարկող համալսարանը՝** Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
i. **Ընդունող համալսարանը՝** Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան
c. **Տևողությունը՝** 04.07.2022 – 08.07.2022
d. **Ֆինանսավորումը՝** 1 340 €

a. **Անուն, ազգանունը՝** Ագրոն Բաջրակտարի
b. **Ուղարկող համալսարանը՝** Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան
c. **Ընդունող համալսարանը՝** Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան
d. **Տևողությունը՝** 04.07.2022 – 08.07.2022
e. **Ֆինանսավորումը՝** 1 255 €
f. **Արդյունքների նկարագրությունը.**

«Ինձ համար պատիվ էր այցելելու Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան: Հինգօրյա այցը շատ հետաքրքիր էր, օգտակար փորձ ձեռք բերեցի: Հնարավորություն ընձեռվեց փորձի փոխանակման միջոցով ծանոթանալ համալսարանի կրթական գործընթացներին, հասարակական և մշակութային ծրագրերին»: